



**ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՇՈՒ 59-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ
Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ**

Ապրիլի 24-ին, չորեքշաբթի.—Յիշատակ բիւրառոր նահատակացն մեռց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի.

Ապրիլյան եղեռնի 59-րդ տարեդարձի տիսուր առիթով Մայր տաճարում, Նահատակաց հիշատակին նվիրված խորանի վրա, և պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհմ. Մարտիրյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբանությամ անդամներով:

Ս. պատարագին ներկա են նաև Մայր Աթոռի ողջ աշխատավորությունը, հոգեոր ճեմարանի դասախոսական կազմը և հավատացյալների մի հոծ բազմություն, ինչպես նաև բազում ովհատավոր սփյուռքի գանազան համայնքներից:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը խոսում է հոգելից ու հայրենարույր հետևյալ քարոզը՝ ոգեկոչելով խնկելի հիշատակը Ապրիլյան Հահատակների:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ 1974 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ**

Սիրելի սգակիր ժողովուրդ,

Այսօր ապրիլ 24-ն է: Այս ս. տաճարի կամարների ներքո հավաքված ենք, սուրբ պատարագավ և հոգեհանգույցն արարողությամբ, աղոթելու մեր բյուրավոր նահատակաց համար և մաղթել նրանց հոգիներին հանգիստ և հավիտենական խաղաղություն:

Այս ս. տաճարը, ինչպես քաջ գիտեք, աշխարհի հնագույն սրբավայրերից մեկն է: Հազար և վեց հարյուր տարիների պատմություն ունի նա: Բառում դարերի ընթացքում, Մենք պատկերացնում ենք այժմ Մեր աշքերի



առաջ, ո՞վ գիտե, քանի-քանի անգամներ հայ ժողովրդի զավակներ և հոգևոր սպասավորներ և հայոց հայրապետներ, հավաքվել են աշատեղ, հենց այս Մայր տաճարում, աղոթելու նահատակված հայոց հոգիների համար: Զեզանից ովքեր որ թղթատեղ են և կարդացել հայոց բազմադարյան պատմությունը, հատկապես վերջին հազար տարիների պատմությունը, գիտեն, թե մեր Ը, հատկապես վերջին հազար տարիների պատմությունը, գիտեն, թե մեր ժողովուրդը հաճախ ողբերգական ժամանակներ է ապրել, հաճախ Հայատան արշավոր ցեղերի ուրքի կոխան դառնալով: Հաճախ բարուքանդ են եղել հայկական շեն քաղաքներ, գյուղեր, եկեղեցներ, վանքեր և կրթական հաստատություններ: Փացել են հազարավոր և տասնակ հազարավոր արվեստի և մշակույթի գանձեր: Առառ հոսկ է հաճատակ մեր ժողովուրդի արյունը: Ահա այսպես է, որ հայոց պատմությունը իր բազմադարյան կյանքի գրքի մեջ արձանագրել է ողբերգության բազում էջեր: Խսկ վերջին ողբերգությունը, գոյց մեծագույն եղեննը հայոց պատմության, տեղի ունեցավ սրանց հիմուն և ինը տարիներ առաջ: 1915 թվականը հայոց պատմության մեջ մի զարհութելի տարերիվ է:

1914-ին բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը վիլհելմյան Գերմանիո նօրային ծրագրով, աշխարհին տիրապետելու ազահությամբ տոգորված: Գրեթե ամբողջ եկորապական հողամասի վրա սկսավ արյուն հոսել առատորեն: Համաշխարհային ողբերգության մի շրջան սկսվեց 1914-ին և տևեց մինչև պատերազմի վախճանը 1918 թվականը, չորս տարիներ շարունակ: Այդ համաշխարհային դժոխքի մեջ մեծ ողբերգության իր բաժինը ապրեց մասնավորապես հայ ժողովուրդը, որ ոչ մեկ առնչություն ուներ այդ պատերազմի հետ: Մի խաղաղ ժողովուրդ էր նա, որ ապրում էր իր պատմական հայրենիքի հողի վրա, սովորական Թուրքիո տիրապետության ներքո, ավելի քան երեք միլիոն համրանքով: Սովորան Համիդ և Թալեաթ փաշա և նրանց բոլոր մեղասկից փաշաները ծրագրեցին ամբողջ արևմտահայությունը ոչնչացնել, կոտորել ողջ մի ժողովուրդ: Այդ ծրագիրը, ավաղ, նրանք կարողացան գործադրել: Ավերվեց ամբողջ Արևմտյան Հայաստանը իր բազմադարյան վաճեքերով, եկեղեցներով, սրբավայրերով, քաղաքներով և գյուղերով: Ամբողջ ժողովուրդը տեղահան արվեց, հատուկ ծրագրով, որպեսզի տեղահանության ընթացքին նրանք մահանան հիվանդություններից, քաղցից և կազմակերպված հավաքական սպանություններից: Տեղի ունեցավ ամբողջական իմաստով մի ցեղասպանություն, մեր դարու առաջին ցեղասպանությունը, որի օրինակով համաշխարհային երկրորդ պատերազմին ավելի մեծ չափերով ցեղասպանություն կազմակերպեց հիտլերյան Գերմանիան, ինչպես ջիւեք, կոտորելով տասնյակ միլիոնավոր մարդիկ, տարքեր ազգությունների, որի պատմությունը բոլորի ծանոթ է: Ահա ապահով վախճան ունեցավ արևմտահայ մեր ողջ ժողովուրդը: Զոհվեցան ավելի քան երկու միլիոն անմեղ հայ մարդիկ, կիներ, երեխաներ, ծերեր, անզեն ու անպաշտպան:

Թեև հիսուն և ինը տարիներ են անցել այդ սկ օրերից, սակայն մեր քրիստոնեական և մարդկային խիճը չի կարող մոռանալ մեր հաճատակներին: Հայ ժողովուրդը արդարորեն և շատ բնական կերպով տարին մի անգամ գոնի, ապրիլի 24-ին, հավաքվում է իր սրբավայրերի կամարների ներք կամ հուշարձանների մոտ, ոգեկոչելու համար հիշատակը իր զոհված զավակների, աղոթելու նրանց հոգիների հանգստյան և խաղաղության համար և աղոթելու նաև, որ ազևս աշխարհում ոչ մի տեղ, երբեք նման ողբերգություններ տեղի չունենան: Այս պահին, ճիշտ է, նաև և առաջ աղոթում ենք մեր ազգի հաճատակների հոգիների համար, բայց Մեր սիրտը վկայում է, թե մեր աղոթքը տարածվում է նաև բոլոր ժողովուրդների հաճատակների վրա, որով-

հետև մենք նոյնքան վիշտ և ափսոսանք ենք զգում նաև այլոց զոհերի համար: Գոյց ավելի քան այլ ազգեր, աշխարհում, մենք հայերս ավելի ենք հասկանում ուրիշի տառապանքը, ուրիշի ողբերգությունները: Թող ժողովուրդները հասկանան վերջ ի վերջո, որ նման ճանապարհներով, պատերազմներով, ցեղասպանություններով, կոտորածներով ոչ մի հարց չեն կարող լուծել և ոչ ոքի չեն կարող երշամկացնել, ընդհակառակը, դժբախտությունը կիմի համատարած, դժբախտությունը կտարածվի ուշ կամ շուտ նաև բոլոր նրանց վրա, ովքեր պատերազմներ են սանձազերծել և ովքեր կոտորածներ են կազմակերպել: Մենք հավատում ենք աստվածային արդարության:

Սիրելի ժողովուրդ, նահատակների հարգանքի մեր տուրքը մատուցելու այս պահին Մենք անդրադառնում ենք նաև մի ուրիշ ճշմարտության, այն է՝ որ հայ ժողովուրդը ճիշտ է, կոտորվեց, գրեթե կիսով չափ, բայց մնացած կեսը, Արևելահայաստանը, որի մեջ մենք այժմ ապրում ենք՝ փրկվեց: Վերածնվեց հայկական նոր պետականությունը: Հայ ժողովուրդը հետզհետև համախմբվեց այստեղ: Մոտիկ անցյալում գրեթե անդունդի եզրին հասած մեր երկիրը դարձավ շատ ավելին, քան երազում էին մեր նախորդ սերունդները: Սովետական մեր մայր հայրենիքը, խաղաղ, ապահով ու կենսունակ, այսօր միակ հույսն ու ապավենն է համայն հայության, միակ գրավականը մեր ազնիվ երազանքների իրականացման թե՛ հայաստանցի ժողովրդի համար և թե՛ ի սփյուռ աշխարհի ապրող մեր պանդոխտ զավակների համար: Չորացնել մեր այսօրվա ապրող ու միշտ կառուցվող Հայաստանը, ամենայն հայոց Հայաստանը, Ե՛լ ավելի շենացնել նրան, Ե՛լ ավելի ծաղկեցնել նրան, նշանակում Ե՝ լավագույն ձևով հարգանք մատուցել մեր նահատակների հիշատակին: Ասված է արդեն, և Մենք ուզում ենք կրկնել, թե արդի մեր մայր երկիրը իր ժողովրդով, իր իրազործումներով, կյանքի և աշխատանքի բոլոր բնագավառներում հանդիսանում է անխորտակելի ու կենդանի ամենափառավոր հուշարձանը, նվիրված մեր երկու միջին զոհերին:

Այս ճշմարտությունը երեւմն բավարար չափով չի հասկացվում սակայն: Մեր կյանքում կան երևոյթներ, որոնք դեռ վիշտ են պատճառում մեզ բոլորիս: Պետք չէ թաքցնենք մեր տկարությունները, մեր թերությունները: Մենք այնքան տառապած ենք անցյալում և այնքան բան կորցրած, որ մեզ համար սրբազն և նվիրական է այն, ինչ որ մեզ մնացել է, այն, ինչ որ մենք ունենք, այն, ինչ որ մենք այսօր տեսնում ենք, որ օրեցօր աճում ու զարգանում ու ծաղկում է այստեղ մեր շուրջը:

Սակայն, նոյնիսկ մեր մեջ, հենց Սովետական Հայաստանում, կան երեւմն առանձին ուղեկորդումներ, որոնք չեն հասկանում այս ճշմարտությունը և լրում են մայր հայրենիքը ու ընդմիշտ հեռանում, ապրելու համար չգիտենք որտեղ, գոյց ավելի շոայ կյանքի պայմաններ որոնելու, չգիտակցելով, թե ամեն հայ մարդ, որ պոկվում է մայր հողից, նա կորցնում է իր հոգին, կորցնում է իր զավակներին, իր թոռներին:

Երեկ իրիկուն մեր երիտասարդ միաբաններից մեկը, արտասահմանցի, Մեզ մոտ եկավ, մտահոգված, ասելով, թե՝ «Գիտեք Վեհափառ, լսեցի, որ որոշ թվով ընտանիքներ դիմել են պատկան մարմիններին՝ Հայաստանից ընդմիշտ մեկնելու համար»: Ապրիլի 24-ի նախօրյակին Մեր սիրտը արյունով լեցվեց: Զի՞ կարելի հաշտվել այսպիսի հայերի մտայնության հետ: Այսպիսին բարոյապես իրավունքը չունեն այսօր Միծեռնակաբերդ բարձրանալու: Մեր պարտքն է, մեր սրբազն կոչումն է, հայրաբար, եղբայրաբար, հայաբար խորհուրդ տալու բոլոր նրանց, որպեսզի չլրեն մայր հայրենիքը, որպեսզի չնվազի հայերի թիվը այստեղ: Այս է ճշմարիտ հայ մարդու խղճի պարտ-

ըլ: Եվ այսպես է, որ մենք իրապես հարգած կարող ենք լինել հիշատակը մեր նահատակների և հավատարիմ մնալ նրանց ուխտին, նրանց երազանքներին, նրանց արյան ձայնին: Նույնը կատարվում է նաև որոշ չափով Մերձավոր Արևելքում, որտեղից, շգիտենք ինչո՞ւ, հայեր ցրվում են աշխարհով մեկ, եւ-ունաղով արարական եղբայրական երկրներից, հատկապես հայախնամ Լիքրանանց, որ Մենք համարում ենք հայոց համար մի նվիրակամ հաստատուն օջախ: Բոլոր բարդական ուժերը պետք է լարել, որպեսզի կանգ առնի այս երևոյթը: Անշուշտ չենք կամենում ողբերգության վերածել այս հանգամանքը: Բնականաբար մեր երկրի երեք միլիոն հայության թվի համեմատությամբ մի քանի հարյուր ընտանիքներ ավելի կամ պակաս առանձին հշանակություն չունեն, բայց իբրև Հայրապետ Հայոց Մեր սիրու ցավում է, Մեր խիդը վրդովում, հատկապես մեր նահատակների հիշատակին նվիրված այս պահին: Մենք պարտք զգացինք մեր կյանքի այս տիսուր մեկ երևոյթը ընդգծելու, որպեսզի արթուր մնա հայ ժողովոյի գիտակցությունը, և մենք բոլորս ոչ միայն խոսքով, ոչ միայն աղոթքով հարգենք հիշատակը մեր մեռելների, այն մասնավանդ կենդանի գործով, շինարար գործով, հայրենանվեր գործով: Ինչպես առաջապես է ասում. «Խօսքը առանց գործի մեռեալ է»: Մենք մաղրում ենք, որ թե՛ Հայաստանի մեջ բնակվող Մեր զավակները և թե՛ մեր պահուիստ ժողովուրդը, այս ոգով ամրապնդեն իրենց գիտակցությունը:

Հարգանք, լո՛յս և օրինությո՞ւն մեր բյուրավոր նահատակների հիշատակին:

Հարգանք և փա՛ռք մեր վերաճնված ժողովրդին, մեր հավիտենական Մայր Հայաստանին: Ամեն:

Վեհափառ Հայրապետի քարոզից հետո, Նրա հանդիսադրությամբ և ողջ միարանության անդամների մասնակցությամբ, եկեղեցական թափորս, շարականով և խնկով, առաջնորդվում է Մայր տաճարի հյուսիսային կողմում գտնվող նահատակաց հուշարձան, որ կատարվում է մասնավոր հոգեհանձիս:

Հավատացյալների և ուստավորների հոծ բազմությունը երկյուղած բարեպաշտությամբ ուղեկցում է եկեղեցական թափորին և հոգեհանգստյան արարողությանը:

Նահատակաց հուշարձանը ծածկվել է թարմ, գեղեցիկ ծաղիկներով:

Միարանության անդամները և հոգևոր ճեմարանի ուսանողները մեկիկմեկիկ խնարիսլում են հուշարձանի առաջ և մեխակներ գետեղում հրա պատվանդանին:

Սպիրիլյան եղեռնի առթիվ հայ ժողովուրդը, իր Հայրապետի գլխավորությամբ, իր աղոթքն ու հարգանքի կնորուկն է մատուցում եկեղեցու և հայրենիքի նահատակների խնկելի հիշատակին:

«Երանի մեռելոցն որք ի Տէր Անշեցին»:

Ժամը 16-ին Մայր Աթոռի միարանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և մայրավանքի պաշտոնեությունը բարձրանում են Ծիծեռնակաբերդ, հարյուր հազարավոր երևանցիների հետ՝ մի անգամ ևս խնարիսվելու Մարիլյան եղեռնի զոհերի պայծառ հիշատակի առաջ:

Նման հանդիսություններ կատարվեցին նաև մեր Անքարին բոլոր թեատրում: